ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ԱԼՄԱՍՏ ԼԵՆԴՐՈՒՇԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ.Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Պ. Հովակիմյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ն.Դ.Դավոյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հուլիսի 7-ին ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. հունիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հասարակության կյանքում իրականացող քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունները, բարոյական հարաբերություններում և արժենորմատիվային ոլորտում առկա տեղաշարժերը հանրակրթությանն առաջադրում են նոր խնդիրներ՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային փորձի յուրացման անհրաժեշտության, քաղաքացիական որակների ձևավորման, միջմշակութային հաղորդակցման, արժեքային կողմնորոշումների ձևավորման հետ:

Հանրակրթության դերն ու նշանակությունն արժևորվում են ոչ միայն աճող սերնդին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով ապահովման, այլև աշխարհի, մարդկային փոխհարաբերությունների, մշակութային արժեքների նկատմամբ պատկերացումների և արժեքային կայուն կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում մեծ դեր և հնարավորություններ են վերապահված մայրենի և օտար լեզուների, մաթեմատիկայի արժեքային ներուժին: Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը դիտարկվել է փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի տեսանկյուններից:

Արժեքներին, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը, այդ գործընթացի մարդասիրական և անձնակողմնորոշիչ ուղղվածությանը հետազոտություններ են նվիրել Ե.Վ. Բոնդարևսկայան, Ա.Դ.Դեյկինան, Ա.Ա. Լեոնտևը, Դ.Ա. Լեոնտևը, Վ.Վ. Կրաևսկին, Վ.Վ. Շչերբան Ն.Բ. Կռիլովան, Մ.Ս.Կագանը, Վ.Ա.Սլաստյոնինը, Կ.Ռոջերսը, Ռ.Ա.Մարդոյանը, Հ.Ս. Միքայելյանը և այլք:

Կրթության արժեբանական մոտեցումները դիտարկվել են Լ.Վ. Թորգոմյանի, Ռ.Ս. Մարդոյանի, Ն. Ա. Աստաշովայի, Ն. Տ. Աբրամովայի, Ա. Ի. Դոնցովի, Ա. Վ. Կիրյակովայի, Ն. Դ. Նիկանդրովի, Վ. Ա. Սլաստյոնինի և այլոց աշխատություններում:

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հոգեբանամանկավարժական տեսանկյուններն ու այդ գործընթացի առանձնահատկությունները հետազոտվել են Ն.Տ.Աբրամովայի, Ի.Ս.Արտյուխովի, Լ.Մ.Արխանգելսկու, Լ.Ի.Բոժովիչի, Ս.Ս.Բուբնովայի, Ա.Մ.Միրոնովի, Վ.Ն.Մյասիշչևի, Ս.Լ.Ռուբինշտեյնի, Վ.Ֆրանկլի, Հ.Ս.Միքայելյանի կողմից:

Այնուհանդերձ մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ առկա է հակասություն կրտսեր դպրոցականների՝ ուսուցման գործընթացում արժեքային կողմնորոշումների ձևավորման անհրաժեշտության, մայրենի և

օտար լեզուների արժեքային ներուժի շեշտադրման և այդ գործընթացի արդյունավետ իրականացման մեթոդական ոչ բավականաչափ մշակվածության միջև: Նշված հակասությունը պայմանավորեց տարրական դպրոցի կրթական համակարգում մայրենի և օտար լեզուների արժեկողմնորոշիչ առանձնահատկությունների հաշվառման, կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակային և գործնական կողմերի միասնության ապահովման ու մեթոդական համալիրի մշակման անհրաժեշտությունը:

Հիմնախնդրի արդիականությունը, տեսականորեն և գործնականում ոչ բավականաչափ հիմնավորվածությունը պայմանավորեցին հետազոտության թեմայի ընտրությունը՝ «Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորումը տարրական դպրոցում»:

Հետազոտության նպատակն է առաջադրել, տեսականորեն և գործնականում հիմնավորել մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների արդյունավետ ձևավորման մանկավարժական պայմաններն ու մեթոդական համալիրը:

Հետազոտության օբյեկտը տարրական դպրոցում մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան տարրական դպրոցում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանների և մեթոդների համալիրն է:

Հետազոտության վարկածն այն է, որ մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումն արդյունավետ կիրականանա, եթե՝

1. մշակվի և ուսումնական գործընթացում ներդրվի կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը,
2. բացահայտվի, տեսականորեն ու գործնականում հիմնավորվի տարրական դպրոցում մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանների և մեթոդների համալիրը,
3. մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում առավելապես կիրառվեն արժեկողմնորոշիչ բովանդակություն ունեցող տեքստեր, մշակվեն առաջադրանքներ, վարժություններ, որոնք բխում են կրտսեր դպրոցականի պատկերացումներից, աշխարհընկալումից, հետաքրքրություններից, սոցիալական փորձից,
4. ուսուցման գործընթացում հաշվի առնվեն մայրենի և օտար լեզուների արժեքային ներուժը, լեզվամշակութային առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Իրականացնել անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության վերլուծություն, բնութագրել հետազոտության թեմային վերաբերող հիմնական հասկացությունները:

2. Բացահայտել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակը, սահմանել մակարդակները և դրանք բնութագրող չափանիշները:

3. Առաջադրել և տեսականորեն ու գործնականում հիմնավորել տարրական դպրոցում մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանների և մեթոդների համալիրը:

4. Մշակել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- «արժեք», «արժեքային կողմնորոշումներ» հասկացություններին վերաբերող փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական տեսությունները (Մ. Ս. Կագան, Դ. Ա. Լեոնտև, Ա. Ֆ. Լոսև, Բ. Կ. Լիխաչյով, Ն. Ս. Ռոզով, Մ. Ռոկիչ, Ռ.Ա.Մարդոյան և այլք),
- կրթության բովանդակության մեջ արժեքային բաղադրատարրի շեշտադրման վերաբերյալ տեսությունները (Ն. Ա. Աստաշովա, Ե. Վ. Բոնդարևսկայա, Ս. Ս. Բուբնով, Ա. Ա. Լեոնտև, Ե. Ի. Խաչիկյան, Մ. Գ. Կազանկինա, Ա. Վ. Կիրյակովա, Ս. Ի. Մասլով, Վ. Ս. Սոլովյով, Լ. Վ Թորգոմյան, Հ.Ա.Միքայելյան և այլք),
- լեզվի՝ որպես մշակութային արժեքի վերաբերյալ հայեցակարգային դրույթները (Ն. Դ. Արուտյունովա, Ա. Դ. Դոնցով, Ա. Ա. Լեոնտև, Ի. Յա. Լերներ, Զ. Ի. Ռոմանովսկայա, Ս. Գ. Տեր-Մինասովա, Բ. Մ. Եսաջանյան, Լ. Վ. Շչերբա և այլք):

Հետազոտության խնդիրների լուծման համար առաջադրվել են մանկավարժական հետազոտության տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝ հիմնախնդրին վերաբերող փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության, տարրական դպրոցի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի, առարկայական չափորոշիչների վերլուծություն, դիտում, զրույց, հարցազրույց, անկետավորում, մանկավարժական փորձարարություն, ինչպես նաև հետազոտության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական վերլուծություն:

Հետազոտության բազան են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 51, 65, 119, 145 դպրոցները:

Հետազոտությունն իրականացել է երեք փուլով:

Առաջին փուլում (2007-2008թթ.) տեսականորեն հիմնավորվել է հետազոտության հիմնախնդիրը, ուսումնասիրվել են հետազոտության թեմային նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվաբանական տեսություններն ու մոտեցումները, որոշվել են հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, մեթոդները, ձևակերպվել է գիտական վարկածը, ընտրվել են հետազոտության բազան և փորձարկվողների համակազմը:

Երկրորդ փուլում (2009-2010թթ.) ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, մշակվել են մանկավարժական հայտորոշման չափանիշները, հաստատող փորձարարության մեթոդիկան, մշակվել է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը, ձևակերպվել են այդ գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

Երրորդ փուլում (2010-2012թթ.) անցկացվել է փորձարարական հետազոտության ձևավորող փուլը, հիմնավորվել են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման՝ մեր կողմից առաջարկված մեթոդներն ու միջոցները, ընդհանրացվել են տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները, հիմնավորվել է կիրառված մեթոդական համալիրի արդյունավետությունը, ձևակերպվել են հետազոտության եզրակացությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Վերլուծվել և համակարգվել են անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման վերաբերյալ փիլիսոփայական և մանկավարժահոգեբանական տեսություններն ու մոտեցումները, բնութագրվել են արժեքների դասակարգման սկզբունքները:
2. Մշակվել և տեսականորեն ու գործնականում հիմնավորվել է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական մոդելը:
3. Առաջադրվել և փորձարարությամբ հիմնավորվել են մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմաններն ու մեթոդական համալիրը:
4. Սահմանվել են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակներն ու այդ մակարդակները բնութագրող չափանիշները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Որոշակիացվել են հետազոտության հիմնախնդրին վերաբերող հիմնական հասկացությունները՝ «արժեք», «արժեքային դիրքորոշում», «արժեքային կողմնորոշումներ», «արժեքային պատկերացում», «արժեքային հարաբերություն»:
2. Տեսականորեն հիմնավորվել են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման դիդակտիկական մոտեցումները՝ ուսուցման

համարժեք ձևերի ու մեթոդների կիրառումը, դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնական դրդապատճառների ու ճանաչողական հետաքրքրությունների ակտիվացումը:

3. Հիմնավորվել են արժեկողմնորոշիչ տեքստերի և առաջադրանքների կիրառման սկզբունքներն ու մեթոդական տեսանկյունները:

4. Տեսականորեն հիմնավորվել են անձնակողմնորոշիչ ուսուցման պայմաններում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մեթոդական համալիրը՝ հիմնված արժեքային բովանդակություն ունեցող թեմատիկայի, ուսումնական վարժությունների ու առաջադրանքների կիրառման վրա:

2. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման՝ մեր կողմից առաջարկվող մեթոդական համալիրը կարող է կիրառվել ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, մեթոդական ուղեցույցների ստեղծման գործընթացում, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման գործընթացում:

3. Մշակված մեթոդական նյութերն օգտակար կլինեն նաև նախադպրոցական և կրթադաստիարակչական այլ հաստատություններում տարիքային տվյալ կենսափուլում գտնվող երեխաների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը նրանց հոգևոր ներաշխարհի զարգացման նախադրյալն է, ընդհանուր մշակույթի ձևավորման կարևոր բաղադրատարրը, որն արդյունավետ է իրականանում մանկավարժական նպատակաուղղված ներգործությամբ՝ խորապես հաշվի առնելով դասավանդվող առարկաների արժեքային ներուժն ու հնարավորությունները:

2. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը ներառում է այդ գործընթացի բովանդակությունը, նպատակը, իրականացման մեթոդաբանական մոտեցումները, սկզբունքները, առանձնահատկությունները, մանկավարժական պայմանները, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները, այդ մակարդակների հայտորոշման միջոցները, գործնական և բովանդակային բաղադրատարրերը, արժեքային կողմնորոշումների արդյունավետ ձևավորման մեթոդական համալիրը, տեխնոլոգիաները, սովորողների ստեղծագործական աշխատանքի տարբեր ձևերը, ինչպես նաև ակնկալվող վերջնարդյունքներն ու դրանց վերլուծությունը:

3. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետությունն ապահովում են համագործակցային ուսումնառությանն ու ստեղծագործական մտածողությանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիաները, անձնակողմնորոշիչ ուսուցման մեթոդաբանական մոտեցումները, կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը:

4. Մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերի, գեղարվեստական և գիտահանրամատչելի բնագրերի, վարժությունների ու առաջադրանքների կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների պատկերավոր և ստեղծա-գործական մտածողության ձևավորմանը, աշխարհի հուզական և գեղագիտական ընկալմանը, համարժեք հույզերի, խոսքի ու վարքի դրսևորմանը, բարեկիրթ հաղորդակցմանը, ազգային և համամարդկային մշակութային արժեքների գնահատմանը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության մեջ մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության առարկային, նպատակին, խնդիրներին համարժեք ընտրված մեթոդների կիրառմամբ, հետազոտության տեսական դրույթների փորձարարական հիմնավորմամբ, գիտափորձի համակարգված բնույթով, տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների համալիր վերլուծությամբ, իմաստավորմամբ և ընդհանրացմամբ, եզրահանգումների հիմնավորվածությամբ:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում, միջազգային համաժողովներում, տպագրված հոդվածներում

Հետազոտության արդյունքները ներդրվել են գիտափորձի բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում: Հետազոտության արդյունքներն արտացոլվել են հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթագլուխներով և եզրահանգումներով 2 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված և ուսումնասիրված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 166 էջ, պարունակում է 14 աղյուսակ, 10 տրամագիր, 1 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպա-

նությանը ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Մայրենի և օտար լեզուների ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գիտատեսական հիմնավորումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական մեկնաբանումը», տրված է հետազոտության հիմնախնդրի փիլիսոփայական, արժեբանական, հոգեբանական, մանկավարժական, սոցիոլոգիական, մշակութաբանական գրականության տեսական վերլուծությունը: Վերլուծված են արտերկրի և հայ գիտնականների տեսակետներն ու հայեցակարգային մոտեցումները: Հիմնավորված է, որ անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի կարևորությունը բխում է ժամանակակից աշխարհում արժեքային գերակայությունների փոփոխության, հասարակության արժեքային պատկերացումների շարունակական վերարժևորման գործընթացներից: Ձևավորված արժեհամակարգի հիման վրա են որոշվում անձի վարքի դրսևորումներն ու մտածելակերպը:

Դիտարկված են «արժեբանություն», «արժեքային կողմնորոշումներ», «արժեք» հասկացությունների մեկնաբանությունները մի շարք գիտությունների՝ կրթության փիլիսոփայության, արժեբանության, մարդաբանության, մշակութաբանության, սոցիոլոգիայի, ընդհանուր և սոցիալական հոգեբանության մեջ ձևավորված բազմաթիվ տեսություններում:

Մասնավորապես նշվում է, որ «արժեքային կողմնորոշում» հասկացությունը առանցքային է դիտարկվող հիմնախնդրի համատեքստում: Արժեքային կողմնորոշումները բնորոշում են հասարակական արժեքների (վարքի նորմերի, իդեալների) նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքը, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում:

Ելնելով տարբեր տեսական-հայեցակարգային մոտեցումներից՝ «արժեքային կողմնորոշումներ» հասկացությունը սահմանվել է որպես սուբյեկտի կողմից արժեքների գնահատում և ընկալում՝ ըստ դրանց նկատմամբ նախընտրության, որը որոշում է անձի գործունեության դրդապատճառները:

Հիմնավորվում է, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը հարկ է դիտարկել արժեքների ընկալման, գնահատման և գործնականում դրանց նկատմամբ արտահայտած վերաբերմունքի տեսանկյունից:

Հիմնախնդրի վերլուծության համատեքստում դիտարկված են կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները:

«Մայրենի և օտար լեզուների ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իրականացման գիտամեթոդական հիմնավորումը» խորագրով երկրորդ

ենթագլխում հիմնավորվում է, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց կողմից գիտակցվող, իմաստավորվող, կենսագործունեության մեջ ուղղորդող գերակա արժեքները: Դիտարկված և բնութագրված են արժեքների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնք առավելագույնս ընդգրկում են արժեքները:

Առանձնացված և բնութագրված են կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացման փուլերը և մեթոդները:

Նշվում է, որ արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում նպատակահարմար է կիրառել ուսումնական այնպիսի առաջադրանքներ, մեթոդներ, տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են ուսումնական նյութի մեջ ամփոփված արժեքների յուրացմանը:

Երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բաղադրատարրերը»** խորագրով ենթագլխում բնութագրված և հիմնավորված են մայրենի, օտար լեզուների, ինչպես նաև մաթեմատիկայի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակային բաղադրատարրը, որը բնութագրվում է մայրենի, օտար լեզուների և մաթեմատիկայի առանձնահատկություններով:

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են գեղարվեստական, գիտահանրամատչելի տեքստերում, ժողովրդական մանրապատում ստեղծագործություններում՝ առած-ասացվածքներում, հանելուկներում, հեքիաթներում, գրավոր խոսքի տեսակներում (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, գործնական գրություններ և այլն), ինչպես նաև լեզվի յուրացմանը նպաստող վարժություններում ու առաջադրանքներում, լեզվի գործառույթներում, տարրական դպրոցում լեզուների ուսուցման նպատակներում, մայրենի լեզվի և մաթեմատիկայի առարկայական չափորոշիչներում:

Այդ համատեքստում դիտարկված են լեզվի հիմնական գործառույթները՝ որպես կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր պայման:

Անդրադարձ է կատարվել նաև մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական արժեքների յուրացման խնդրին:

Ընդհանրացնելով՝ շեշտադրվում է, որ հետազոտվող գործընթացի բովանդակության մեջ պետք է ներառվեն արժեքների հետևյալ խմբերը՝ իմացական, սոցիալական, գեղագիտական, բարոյական:

Առանձնացված և բնութագրված են կրտսեր դպրոցում մայրենի և օտար լեզուների, մաթեմատիկայի ուսուցման գործընթացում յուրացվող արժեքների իմաստային խմբերը:

Հաշվի առնելով տարրական դպրոցում մայրենի և օտար լեզուների, մաթեմատիկայի ուսուցման առանձնահատկությունները՝ այդ առաջադրանքների

արժեքային ներուժը դիտարկվում է դրանց գործնական ուղղվածության տեսանկյունից:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնուրոշումների ձևավորման տեսանկյունից բացառիկ կարևոր դեր ունեն գրավոր խոսքի տեսակները՝ թելադրությունը, փոխադրությունը, շարադրությունը:

«Արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնահարցը տարրական դպրոցի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում» խորագիրը կրող չորրորդ ենթագլխում ներկայացված և վերլուծված տարրական դպրոցում մայրենի և օտար լեզուների տիրապետմանը ներկայացվող որակական պահանջներն ըստ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի, որոնք արտահայտված են կրթության բովանդակությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերում:

Վերլուծված են մայրենիի և օտար լեզուների ուսումնական ծրագրերի արժեքային բովանդակությունը՝ պարզելու ուսումնական թեմաների արժեքային ներուժը:

Ուսումնական ծրագրերի բովանդակության արժեքային ուղղվածության բացահայտումը իրականացվել է ծրագրերի բաղկացուցիչների (թեմա, նպատակ, աշխատանքի բովանդակություն, ուսումնական գործունեություն, առարկայական ինտեգրում, խոսքային և ստեղծագործական գործունեություն, մեթոդական հնարներ, գործնական աշխատանք, կապակցված խոսքի զարգացում և այլն)՝ արժեքային տեսանկյունից դիտարկման հիման վրա:

Մեր կողմից մանրամասնորեն ուսումնասիրվել են նաև «Օտար լեզուներ (ռուսերեն և անգլերեն)» ուսումնական բնագավառի ծրագրերը, համեմատվել մայրենիի ծրագրերին, թեմատիկ նյութերին, որոնք ունեն արժեկողմնորոշիչ ուղղվածություն:

Ուսումնական ծրագրերի համեմատական վերլուծությունը սովորողների արժեքային կողնորոշումների ձևավորման տեսանկյունից թույլ է տալիս եզրակացնել, որ ուսումնական բոլոր նյութերում գերակայում են իմացական, տեղեկատվական, ճանաչողական, հաղորդակցական, սոցիալական, գեղագի-տական, լեզվամշակութային, բարոյական արժեքները:

Հիմնավորվել է նաև, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման համար երաշխավորվող ուսումնական նյութերի թեմատիկ բովանդակությունը և լեզվի ուսուցման նպատակները ոչ միշտ են ուղղորդում ուսուցչի գործունեությունը սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղղությամբ: Նշվում է, որ ծրագրերում հստակորեն չի արտացոլվում հուզական-արժեքային բաղադրատարրը, չի շեշտադրվում արժեուղղորդ բովանդակությունը: Դա զգալիորեն դժվարացնում է ուսուցչի՝ սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված աշխատանքը:

Դասագրքերի վերլուծությունը թույլ տվեց նաև բացահայտել, որ շատ արժեքներ արտացոլված են այլաբանորեն, ոչ ուղղակի:

Ատենախոսության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մոդելի փորձարարական հիմնավորումը» խորագիրը կրող գլխի առաջին ենթագլխում՝ «**Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակի հայտորոշումը**», ներկայացված են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակի հայտորոշման արդյունքները փորձարարական դպրոցներում:

Ներկայացված է փորձարարական հետազոտության նպատակը, բացահայտված են փորձարարական աշխատանքի փուլերը, բազան, մեթոդները, չափանիշները, վերլուծված են արդյունքները:

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ թե՛ ստուգիչ, թե՛ փորձնական խմբերում ընդգրկված աշակերտները, որոշակի շեղումներով, նախապատվությունը տալիս են հաղորդակցական արժեքներին. նրանց համար կարևոր է հաղորդակցվել մայրենի և օտար լեզուներով: Ընդհանուր առմամբ իմացական-ճանաչողական արժեքներն առաջնային չեն. ակնհայտորեն դպրոցականները չեն նախընտրում ընթերցանությունը, թեև հակված են էլեկտրոնային տարբեր աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերման: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների բովանդակության մեջ հաճախ անտեսվում են այնպիսի արժեքներ, որոնք բնութագրում են նրանց համագործակցային կարողությունները և հանդուրժողականության որակները: Այնուհանդերձ այն դիտարկումները, որոնք արվել են հայտորոշիչ փորձարարության արդյունքների հիման վրա, չեն կարող լիարժեքորեն արտացոլել կրտսեր դպրոցականների արժեքային ըմբռնումները:

Բնութագրված են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների բացահայտման մեթոդները, որոնց շնորհիվ հնարավոր եղավ առավել լիարժեք պատկերացում կազմել նրանց մտագործունեության, խոսքի մշակույթի, երևակայության, ստեղծագործական մտածողության մասին:

Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ առավել նշանակալի են գեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական արժեքները:

Միաժամանակ բացահայտվեց այն հանգամանքը, որ մայրենի և օտար լեզուների յուրացման ընթացքում ձեռք բերվող շատ արժեքներ կենսական հանգամանքների, ուսումնական նյութի, գրքերի, տարբեր տպավորությունների, միջոցառումների, էքսկուրսիաների ազդեցությամբ կարող են փոփոխվել: Որոշված և բնութագրված են կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները:

Ներկայացված են յուրաքանչյուր մակարդակի բնութագրիչները, նշված բնութագրիչների հիման վրա, ընդհանրացնելով հայտորոշիչ մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված տվյալները, մեր դիտումների, զրույցների, դասալսումների արդյունքները, փորձարարության հաստատող փուլում սահմանեցինք կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների,

ձևավորվածության բարձր, միջին, ցածր մակարդակները ստուգիչ և փորձնական խմբերում:

Փորձարարության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ կրտսեր դպրոցականների մեծամասնությունը դրսևորում է արժեքային կողմնորոշումների ձևավորվածության միջին մակարդակ. ցածր և բարձր մակարդակները գրեթե համընկնում են:

Բացահայտված են նաև որոշակի արժեքների նկատմամբ կրտսեր դպրոցականների վերաբերմունքը, ինչպես նաև ուսումնական գործընթացում ձևավորվող արժեքները՝ ըստ մշակված հայտորոշիչ հարցաթերթիկների, որոնց արդյունքների վերլուծությունն արտացոլված է աղյուսակներում և տրամագրերում:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների անձնային հատկանիշների, արժեկենտրոն գործունեության և համարժեք վարքի ձևավորվածության մակարդակների ստուգման արդյունքները փորձարարության հաստատող փուլում:

Փորձարարական հետազոտության առաջին՝ հաստատող փուլի տվյալները ցույց տվեցին, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը նպատակաուղղված, համակարգված բնույթ ունի, որն իրականացվում է ուսումնական և արտաուսումնական գործընթացում՝ մանկավարժական արդյունավետ պայմանների, ներգործության տարբեր ձևերի, մեթոդների, միջոցների կիրառմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի մեթոդական ապահովումը»** ներկայացված և բնութագրված է մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմորոշումների ձևավորման մեթոդական համալիրը, որը ներառում է ուսումնական նյութի շուրջ տարվող աշխատանքը, այդ նյութի յուրացմանն ուղղված ավանդական և նորագույն մեթոդների նկարագրությունը, ուսումնական գործունեության կազմակերպման ձևերը, ուսումնական և արտաուսումնական գործունեության հմուտ զուգակցումը, որն իրականացվել է կրթական զարգացնող միջավայրում՝ «սուբյեկտ-սուբյեկտ» փոխներգործության պայմաններում:

Ներկայացված են հայրենիքի, ժողովրդի պատմության, բնության, մարդու բարոյական հատկանիշների, լեզվի, աշխարհագրական հասկացությունների մասին դաստիարակչական և խրատական ընդգծված արժեք ունեցող տեքստեր, զրույցներ, առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ մայրենի լեզվից, ռուսերենից և անգլերենից, ինչպես նաև առաջադրանքների և վարժությունների կառուցման ու կիրառման տարբեր մոտեցումներ:

Օտարալեզու տեքստերի շուրջ կատարած ուսումնական աշխատանքների ժամանակ կիրառվել են այնպիսի վարժություններ և առաջադրանքներ, որոնք ուղղված են սովորողների հաղորդակցման ոլորտի ընդլայնմանը և պահանջում

են անհատական, զույգերով և խմբային աշխատանքի տարբեր ձևեր, դերախաղեր (հանպատրաստից, ըստ նախօրոք տրված սցենարի, կերպարային), ինչպես նաև իրավիճակային երկխոսություններ:

Մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կիրառվել են նաև մշակութային երկխոսության կարողությունների զարգացմանն ուղղված վարժություններ և առաջադրանքներ:

Ներկայացված են փորձարարական հետազոտության ընթացքում 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների մայրենիի և օտար լեզուների դասընթացների արժեկողմնորոշիչ թեմաների ուսուցման, միջոցառումների, դերախաղերի օրինակներ, ժամանակակից փոխներգործուն մեթոդների համալիրի, ստեղծագործական առաջադրանքների կիրառման արդյունավետությունը բնութագրող օրինակներ, ինչպես նաև արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված վարժություններ, առաջադրանքներ, մեթոդներ:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների՝ արժեքային դատողություններ անելու կոմպետենցիաների ձևավորման միջոցները:

Երրորդ՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը» խորագրով ենթագլխում ներկայացված են փորձարարական խմբերում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման՝ մեր կողմից մշակված մեթոդական համալիրի արդյունավետությունը հաստատող արդյունքների վերլուծությունը, փորձարարության նպատակը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակները բնութագրող չափանիշները: Ներկայացված են նաև կրտսեր դպրոցականների գնահատողական վերաբերմունքի զարգացմանն ուղղված ինքնագնահատման և փոխադարձ գնահատման թերթիկները՝ ըստ կողմից մշակված չափանիշների:

Փորձարարական հետազոտության ընթացքում մենք բավականաչափ դրական փոփոխություններ արձանագրեցինք երեխաների իմացական-ճանաչողական, արժեքային-գնահատողական, հուզակամային, վարքային-գործունային ոլորտներում:

Ձևավորող փորձարարության ավարտին մենք դարձյալ կիրառեցինք հաստատող փորձարարության ընթացքում ներդրված հայտորոշիչ մեթոդիկան՝ հավաստիանալու համար, թե մեր մանկավարժական ներգործությունը որքանով է արդյունավետ եղել փորձնական խմբերում:

Ստուգիչ և փորձարարական խմբերում աղյուսակով և տրամագրով ներկայացված են արժեքային ներուժ պարունակող բառաշարքերի շուրջ աշխատանքում ընդգրկված դպրոցականների մասնակցության ցուցանիշները փորձարարության սկզբում և վերջում:

Ընդհանրացնելով և վերլուծելով փորձարարության ձևավորող փուլում դիտումների, հարցումների արդյունքները և հիմնվելով արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մեր կողմից մշակված չափանիշների վրա՝ արձանագրեցինք կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների

ձևավորվածության բարձր, միջին, ցածր մակարդակները, որոնք ներկայացված են աղյուսակում և համապատասխան տրամագրում. զուգահեռաբար ներկայացված են հաստատող փորձարարության ընթացքում ստացված տվյալները:

Տվյալները ակնառու ցույց են տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորվածության փոփոխություն փորձնական խմբերում: Այսպես, օրինակ, փորձնական 1 խմբում ցածր մակարդակը նվազել է 9%-ով, փորձնական 2 խմբում՝ 13%-ով, բարձր մակարդակը փորձնական 1 խմբում աճել է 14%-ով, փորձնական 2 խմբում՝ 24%-ով. միջին մակարդակում ևս դրական տեղաշարժեր կան, որը վկայում է կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետության մասին: Ստուգիչ խմբերում ևս որոշակի դրական փոփոխություններ կան. դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ փորձարարությունն ընդգրկել է տևական ժամանակ, և նշված խմբերում ևս կարող էին փոփոխություններ լինել մեր հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձնական 1 խմբում արդյունավետության դինամիկան որոշ չափով զիջում է փորձնական 2 խմբում ստացված տվյալներին: Դա կարելի է բացատրել նրանով, որ փորձնական 1 խմբում ընդգրկված են հիմնականում առաջին և երկրորդ դասարաններում սովորող աշակերտները, և գործունեության նշված ձևերը նրանց երևակայության մեջ, ընկալումներում և պատկերացումներում չեն տպավորվում:

Այսպիսով, ի մի բերելով փորձարարության հաստատող և ձևավորող փուլերում ստացված տվյալները, ստացանք կրտսեր դպրոցականների արժեկենտրոն գործունեության և համարժեք վարքի ձևավորվածության մակարդակները փորձարարության ձևավորող փուլում, որն արտացոլված է համապատասխան աղյուսակում և տրամագրում:

Զուգահեռաբար տրված են հաստատող փորձարարության տվյալները:

Աղյուսակ

Կրտսեր դպրոցականների արժեկենտրոն գործունեության և համարժեք վարքի ձևավորվածության մակարդակները փորձարարության հաստատող և ձևավորող փուլերում(%-ով)

	Մակարդակներ	Ստուգիչ խումբ 1		Ստուգիչ խումբ 2		Փորձնական խումբ 1		Փորձնական խումբ 2	
		Փորձի սկիզբ	Փորձի վերջ	Փորձի սկիզբ	Փորձի վերջ	Փորձի սկիզբ	Փորձի վերջ	Փորձի սկիզբ	Փորձի վերջ
1	Ցածր	28	26	25	22	31	20	26	9
2	Միջին	51	50	53	52	50	49	54	46
3	Բարձր	21	24	22	26	19	31	20	45



Տրամագիր. Կրտսեր դպրոցականների արժեկենտրոն գործունեության և համարժեք վարքի ձևավորվածության մակարդակները փորձարարության հաստատող և ձևավորող փուլերում(%-ով)

Այսպիսով՝ ստացված տվյալները հիմք են տալիս եզրահանգելու, որ փորձնական խմբերում զգալի դրական տեղաշարժեր են արձանագրվել: Այսպես, օրինակ եթե փորձարարության սկզբում փորձնական 1 խմբում արձանագրվել է 31%, իսկ փորձնական 2 խմբում՝ 26% ցածր մակարդակ, ապա փորձարարության վերջում ցածր մակարդակը նվազել է համապատասխանաբար 11%-ով և 17%-ով: Փորձարարության սկզբում փորձնական 1 խմբում գրանցվել է 19%, փորձնական 2 խմբում՝ 20% ցուցանիշ, որը փորձարարության վերջում ավելացել է համապատասխանաբար 12%-ով և 25%-ով, այսինքն՝ փորձարարության վերջում փորձնական խմբերում գերակշռում են միջին և բարձր մակարդակները: Ստուգիչ խմբերում փոփոխություններն էական չեն, որը բացատրվում է նշված խմբերում հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից մանկավարժական համակարգված ներգործության բացակայությամբ:

Մեր տեսական և փորձարարական հետազոտության տվյալները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում անհրաժեշտ է իրականացնել համակարգված ներգործություն՝ դրանում ներգրավելով կրթության բովանդակության և ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր հնարավորություններն ու ռեսուրսները:

Հետազոտությամբ ստացված արդյունքները հավաստեցին մեր կողմից առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները.**

1. Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի առաջադրման և լուծման արդիականությունը պայմանավորված է կրթության բովանդակության մեջ ազգային և համամարդկային հոգևոր արժեքների շեշտադրման անհրաժեշտությամբ, միջմշակութային հաղորդակցման և մշակույթների փոխներթափանցման հարաճուն զարգացումներով: Սովորողների

կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման, անձի և հասարակության համար դրանց նշանակության գիտակցման հրամայականը պահանջում է դեռևս տարրական դպրոցի կրթական գործընթացում խորապես հաշվի առնել ուսումնական առարկաների արժեքային ներուժը:

2. Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը համակարգված գործընթաց է և իրականանում է կրթական բոլոր աստիճանների շարունակականության ու հաջորդականության ապահովմամբ, մանկավարժական նպատակաուղղված ներգործության պայմաններում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, աշխարհի հուզական և գեղագիտական ընկալման յուրահատկությունը, հանրակրթության տվյալ աստիճանի ուսումնական նպատակները:

3. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը ներառում է այդ գործընթացի բովանդակությունը, նպատակը, իրականացման մեթոդաբանական մոտեցումները, սկզբունքները, առանձնահատկությունները, մանկավարժական պայմանները, գործնական և բովանդակային բաղադրատարրերը, արժեքային կողմնորոշումների արդյունավետ ձևավորման մեթոդական համալիրը, տեխնոլոգիաները, սովորողների ստեղծագործական աշխատանքի տարբեր ձևերը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները, այդ մակարդակների հայտորոշման միջոցները, ինչպես նաև ակնկալվող վերջնարդյունքներն ու դրանց վերլուծությունը:

4. Մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմաններն են՝

- կրթության բովանդակության արժեքային բաղադրատարրի արդիականացումը, ուսումնական նյութի արժեքային կողմի ընկալման համար մեթոդական համալիրի մշակումը,
- ինտեգրվող առարկաների լայն հնարավորությունների օգտագործումը, լեզվի բառապաշարի, քերականական և արտահայտչական միջոցների տիրապետման հիման վրա անձնային հատկանիշների, հաղորդակցական, ինքնագնահատման կարողությունների, խոսքի մշակույթի զարգացումը,
- համագործակցային ուսումնառությանը, քննադատական ու ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը, արդյունքների շարունակական վերահսկողությունը,
- դասարանային և արտադասարանային գործունեության ընթացքում զարգացնող, երկխոսական, հաղորդակցական, համագործակցային ինտերակտիվ միջավայրի ձևավորումը՝ դասավանդողների անձնային ու մասնագիտական բարձր որակների դրսևորմամբ:

5. Մայրենի և օտար լեզուների ուսուցման գործընթացում արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերի ընտրության և մեթոդական համալիրի մշակման ընթացքում հարկ է առաջնորդվել արժեքների ընտրության, դասակարգման և խմբավորման սկզբունքներով՝ ըստ կրտսեր դպրոցականների աշխարհայացքի, ուսումնական գործընթացի դիդակտիկական և դաստիարակչական նպատակների:

6. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության չափանիշներն են ինքնագնահատման և շրջապատի նկատմամբ գնահատողական վերաբերմունքի, հաղորդակցման, գեղագիտական ճաշակի ձևավորվածությունը, խոսքի մշակույթը, ստեղծագործական մտածողությունը, սոցիալականացման մակարդակը, նրանց կողմից մշակութային արժեքների ընկալումն ու իմաստավորումը, իրադրությանը համարժեք հույզերի, խոսքի և վարքի դրսևորումը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ **հրապարակումներում.**

1. Տոնոյան Ա.Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը լեզուների ուսուցման գործընթացում, «Մանկավարժական միտք» ամսագիր, 3-4. 2007թ., էջ 19-28:
2. Տոնոյան Ա.Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի կազմակերպման գիտական նախադրյալները լեզվական ցիկլի առարկաների ուսուցման ընթացքում, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 3-4. 2008թ., էջ 16-25:
3. Տոնոյան Ա.Լ., Արժեքների ձևավորման խնդրի արտացոլումը տարրական կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր,6. 2011թ., էջ 15-20:
4. Տոնոյան Ա.Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի մեթոդական ապահովումը, “Модернизациа образования в контексте современных педагогических парадигм” խորագրով միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու- Ер.:Изд. АГП, Артагерс 2014, էջ 282-286:
5. Տոնոյան Ա.Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակի ախտորոշումը, Գիտական տեղեկագիր, № 1-2(26-27), 2016, էջ 93-102:
6. Տոնոյան Ա.Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները մայրենիի, օտար լեզուների և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, 2016թ., էջ 41-50:

ТОНОЯН АЛМАСТ ЛЕНДРУШОВНА

ФОРМИРОВАНИЕ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ УЧАЩИХСЯ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 7-го июля 2016г. в 12:00 на заседании специализированного совета 020 “Педагогики” ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Политические, социально-экономические изменения в общественной жизни, перемены в нравственных отношениях и ценностно-нормативной сфере ставят новые задачи перед образованием, связанные с необходимостью освоения национальных и общечеловеческих ценностей, формирования гражданских качеств, межкультурной коммуникации, ценностных ориентаций.

Прогрессивное развитие жизни диктует новые подходы к формированию ценностно-оценочного поведения к миру посредством овладения родного и английского языков, а такжеи математики. Роль общего образования ценна не только тем, что она дает необходимые знания, обеспечивает формирование умений и навыков, но и способствует развитию ценностных представлений и нравственных ориентиров подрастающего поколения. Современное развитие общего образования характеризуется гуманистической и культурологической направленностью содержания образования, что предполагает осознание человека как наивысшей ценности в поликультурном социуме.

Обязательными компонентами общего образования становятся активизация взаимоотношений между людьми посредством межкультурной коммуникации, формирование ценностных ориентаций учащихся на основе знаний родного и английского языков и математики.

Актуальность и не достаточная теоретическая и практическая обоснованность проблемы обусловили выбор темы исследования: «Формирование ценностных ориентаций младших школьниников».

Цель исследования: выявить и экспериментально обосновать педагогические условия формирования ценностных ориентаций младших школьников.

Задачи исследования:

1. Проанализировать философскую, психолого-педагогическую, методическую литературу по проблеме формирования ценностных ориентаций личности, охарактеризовать основные понятия исследуемой темы.
2. Выявить сложившуюся ситуацию сформированности ценностных ориентаций младших школьников, определить критерии и уровни их харатеристики.
3. Предложить и теоретически и экспериментально обосновать педагогические условия и методический комплекс формирования ценностных ориентаций младших школьников в процессе обучения родного и иностранных языков.
4. Разработать педагогическую модель эффективного осуществления процесса

формирования ценностных ориентаций младших школьников.

Научная новизна исследования.

1. Проанализированы и систематизировано представлены философские и психолого-педагогические теории и подходы формирования ценностных ориентаций младших школьников, рассмотрены принципы классификации ценностей.
2. Разработана и теоретически, и экспериментально обоснована педагогическая модель формирования ценностных ориентаций младших школьников.
3. Предложены педагогические условия и методичесий комплекс эффективного осуществления процесса формирования ценностных ориентаций младших школьников в процессе обучения родного и иностранных языков.
4. Определены уровни сформированности ценностных ориентаций младших школьников и критерии, характеризующие эти уровни.

Теоретическая значимость исследования:

1. Определены основные понятия по проблеме исследования: “ценность”, “ценностные установки”, “ценностные ориентации”, “ценностные представления”, “ценностные взаимоотношения”.
2. Теоретически обоснованы дидактические подходы формирования ценностных ориентаций младших школьников: использование соответствующих методов и форм обучения, учет возрастных особенностей школьников, активизация учебных мотивов и познавательных интересов.
3. Обоснованы принципы и методические подходы применения ценностно-ориентированных текстов и заданий.
4. Теоретически обоснованы наиболее эффективные методы и средства формирования ценностных ориентаций младших школьников в условиях личностно-ориентированного обучения.

Практическая значимость исследования:

1. Разработана и экспериментально обоснована методика формирования ценностных ориентаций младших школьников, основанная на применении ценностного содержания тематики, учебных заданий и упражнений.
2. Разработанные нами методы формирования ценностных ориентаций младших школьников могут применяться в процессе создания учебных пособий, учебников, методических пособий, а также для повышения методического опыта учителей на курсах переподготовки.
3. Разработанные методические материалы будут полезны также в дошкольных и других образовательно-воспитательных учреждениях, в формировании ценностных ориентаций детей данной возрастной группы.

<u>Структура диссертации.</u> Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы. Объем диссертации состовляет 166 компьютерных страниц, содержит 14 таблиц, 10 диаграмм и 1 схему.

TONOYAN ALMAST LENDRUSH
THE LEARNERS' VALUE ORIENTATIONS FORMATION IN ELEMENTARY SCHOOL

Thesis for degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 ''Theory and History of Pedagogy''.

The defence of the thesis will take place on July 7, 2016 at 12^{00} at the session of the Specialized Pedagogical Committee 020 HAC for granting degrees at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University. Address: Tigran Mets 17, 0010 Yerevan)

SUMMARY

The relevance of the research. The political, socio-economic changes implementing in the society, the existing changes in moral relations and value-normative sphere propose new problems to general education which are connected to the national and worldwide experience adoption importance by the growing generation, to the civil quality formation, to the intercultural communication and value orientations formation.

The progressive developments of life dictate new approaches to the value estimating treatment formation and also to the world through mastering Mathematics, Native and Foreign Languages. The role and significance of general education are estimated not only by providing the growing generation with knowledge, ability and skills, but also with the imagination about the world, human relationships, cultural values and stable orientations formation viewpoints. The present developments of general education are described by the humane and culturological direction of education content, which surmises the person to be the highest value realisation in multicultural society. Through intercultural communications the activation of intercommunication among people, the learners' value orientations formation on the basis of knowledge of Mathematics, Native and Foreign Languages become the compulsory component in general education.

The relevance of the problem and not sufficient elaboration in Pedagogy and practice arose the topic of the research: "The Learners' Value Orientations Formation in Elementary School"

The aim of the research is to suggest, to substantiate theoretically and through experiment, the pedagogical conditions and the methodical complex of the effective formation of the junior students' value orientations in the teaching process of Native and Foreign Languages.

To achieve the goal of the research the following **objectives** are set forth:

1. To do philosophical, psycho-pedagogical, methodical literature analysis related to the person's value orientations formation problem and to describe the main ideas related to the topic of the research.
2. To reveal the current condition of the junior students' value orientations formation, to define the levels and the criteria characterizing them.
3. To suggest and to substantiate, through theoretical and experimental ways, the learners' value orientations formation pedagogical conditions and complex of methods in the teaching process of Native and Foreign Languages in elementary school.
4. To work out the effective realization of the pedagogical model of the junior students' value orientations formation process.

The novelty of the research:

1. The philosophical and psycho-pedagogical theories and approaches related to the individual's value orientations formation were analysed and systematized. The

principles of values classification were described as well.

2. The pedagogical model of the junior students' value orientations formation was worked out theoretically and practically.
3. The pedagogical conditions and complex of methods of the effective realization of the learners' value orientations formation process were suggested and defined through experiment in the teaching process of Native and Foreign Languages.
4. The junior students' value orientations formation levels and the criteria characterizing them were defined.

The theoretical value of the research:

1. The main ideas related to the problem of the research were specified: "Value", "Value Position", "Value Orientations", "Value Imagination", "Value Relationship"
2. The junior students' value orientations formation didactic approaches such as: the use of the equivalent ways and methods of teaching, the calculation of the students' age peculiarities, the activation of the educational motivations and cognitive interests were theoretically substantiated.
3. The principles and methodical viewpoints of the use of value orienting texts and tasks were substantiated.
4. The pedagogical conditions of the effective implementation of the junior students' value orientations formation process were theoretically substantiated in the conditions of the person orienting teaching.

The practical value of the research:

1. The method of the junior students' value orientations formation based on the use of value content themes and educational exercises and tasks was worked out and substantiated.
2. The junior students' value orientations formation methods worked out by us can be used in the process of creating manuals, textbooks, methodical guides, as well as, in the retraining process for the enrichment of the teachers' methodical experience.
3. The worked out methodical materials can be useful in preschool and other educational institutions for the same age children in the process of value orientations formations.

Content of the research: The structure of the research consists of introduction, 2 chapters, conclusion and bibliography. The body of the research is 166 computer pages, including 14 tables, 10 diagrams and 1 scheme.